* * *

Լսո՞ւմ ես դու էլ, թե ինչ են խոսում
Մեր մասին ամբողջ ամարանոցում.
Աչքերի տակից, տեսնո՞ւմ ես, ինչպես
Ծածուկ նայելով հետևում են մեզ,
Մեր ամեն խոսքին ականջ են դնում
Եվ կասկածավոր աչքով են անում...
Մեզանից հետո էլ մեկը մյուսին
Կասեն. «Հիշո՞ւմ եք դուք այն երկուսին,
Ազգական չէին, ոչ քույր ու եղբայր,
Ման էին գալիս անընկեր, անմայր...
Եվ գիշերները այս ծառերի տակ
Երգ էին ասում ձայնով ներդաշնակ,
Եվ նրանց երգը զգացմունքով լի,
Որ կախարդանք էր գիշերին տալի,
Որ ծավալվում էր այնքան հեշտալուր,
Լցված սրտերի զեղմունք էր մաքուր։
Նկատո՞ւմ էիք, անտառի մթին
Ստվերում երգը ընդհատում էին.
Այն լռությունը հասկանո՞ւմ էիք...
Մտաբերո՞ւմ եք դեմքը գեղեցիկ
Վայելչահասակ այն աղջկանը.
Երբ երիտասարդ օտարականը
Ագահ աչքերը վրան հառում էր,
Իսկույն շիկնելով նա խոնարհում էր
Սիրուն գլուխը և ձեռքին բռնած
Ծաղկափնջին էր նայում շփոթված...
Ուրախ հնչյո՛ւնը նորա ծիծաղի,
Որ տարածվում էր այնքան դյուրալի
Այս ամայացած, խուլ շրջակայքում
Եվ սուր ճիչերով սրտերը ծակում...

Հիշո՞ւմ եք արդյոք
Այն ախտաբորբոք,
Միշտ զվարթ զույգին.
Սիրահար էին...»։